ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բաժնորդագինը որոշել Թողուած է բաժնորդի կամքին. կարելի է վճարել՝
Ամերիկայի համար տարեկան մինչև 2 տոլար թղթադրմ.
Եւրոպայի և այլ տեղերի համար » » 10 ֆրանգ
Բաժնորդագինը կանխիկ պէտք է վճարել, կամ տարեկան ամբողջ կամ 6 ամիս 6 ամիս և կամ 3 ամիս 3 ամիս դրկելով։
Հատով կը ծախուի 10 սանթիմ
Տնօրէնութիւնն լինք կը վճարէ փոստի ծախքը։

Դ ՏԱՐԻ ԹԻԻ 1

1888 ՀՈԿՏԵՄԲԵՐ 3
ՍԵՊՏԵՄԲԵՐ 21 (Հ. Տ.)

ՀԱՍՑԵԳՐՈՒԹԻՒՆ

Կը հրատարակուի կիս. և երե. օրեր

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն դրկուած ։ նիներն։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ։ ադիրներն։
Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրան[illegible] եզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. գլխագիրը 2 սանդիմ։

Նամակ և ծրար պէտք է դրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամէնիայի Դ տարեմտին առթով մի քանի խօսք. — Խմբագրական ազդեր. — Նաթանեան Գօդոս վարդապետի բանտարկութիւնը. — Թիֆլիզցոտ Ղալիպ փաշայի բարբարոսութիւնները Արձնի մէջ. Զէյթունցիները Հայաստան կը դրկուին. — Պապին կանդակը. — Ամէնիայի խմբագրի ճանապարհորդութիւնն եւ Ամերիկեան մամուլն. — Ասորիների շարժումները. — Հառաջանք Արմենուհուն ի Հայաստան (ոտանաւոր). — Վահեմ. Թագոր փաշա Յակոբեան. — Կ. Գօլճի Պատրիարքի ընտրութիւնը. — Աւտոսահմանի յուշեր. — Ծանուցումներ։

ԱՄԷՆԻԱՅԻ Դ ՏԱՐԵՄՏԻՆ ԱՌԹՈՎ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Ողջոյն և շնորհակալութիւն մեզ համակրող բոլոր Հայ հայրենակիցներին որոց աջակցութեամբ զօրացած կը մտնենք Ամէնիայի Դ տարեշրջանին։

Մեր գրեթէ երկամեայ ճանապարհորդութենէն նոր վերադարձած, մեր խոստման համեմատ այսօր կանք հրատարակել Ամէնիայի Դ տարեշրջանի Ա. թիւն։ Առանց դրամն յայտարարութիւնների, առանց երկար ու բարակ բացատրութիւններու, ասչափ կսեմնք որ միեւնոյն ըմբռնումները և միեւնոյն ուղղութիւն պիտի առաջնորդեն Ամէնիային։

Մեր ճանապարհորդութեան մէջ հետաքրքրութեամբ կուզէինք երբեմն իմանալ նաեւ մեր հայրենակիցներուն մտածումներն Ամէնիային նկատմամբ։

Ամենք փափաք կը յայտնէին որ Ամէնիայի խմբագրութիւնը չբաւականանայ լոկ գաղափարներ տարածելով իր թղթի միջոցով, այլ և ինք առաջ անցնի, իր քարոզած գաղափարներն և սկզբունքներն դործադրութեան համար մի ընկերութիւն կազմակերպէ և գործնական մշակ ասյ իր քարոզած մտքերին։ Կը պատասխանենք որ Ամէնիայի խմբագրութիւնը կաշխատի արդէն թէ գաղափարներ տարածելու և թէ այդ գաղափարներ արդիւնաւորելու սրբազան որ իր առաքելին այժ եւ միջոցներ կը ներեն։ Ինք ուղղակի չձեռնարկեր մի այդպիսի ընկերութիւն կազմակերպելու գործին՝ զանազան նկատումներով, դէմառդեպս անոր համար որ առ այժմ իր շուրջ չտեսներ դեռ այնչափ այժ և չուղեր ալ ուրիշներին խարած լինել չափազանց յոյսերով, այլ կը ցանկայ, կը յուսայ և կը սպասէ որ ուրիշներ աշխատին այդ կազմակերպութեան գործ յառաջ տանելու կանոնաւորապէս և ինք ալ կը ըստ ծին չափ կարելոյն անոնց։ Խմբագրական կարծիքով, Ամէնիայի դոյութիւնը մի անհրաժեշտ պէտք է գործին յաջողութեանն համար և արդէն նոյն իսկ առաջին գործն պէտք է լինի գաղափարներ տարածել որին միջոց եղած է Ամէնիան. երբ Ամէնիայի գոյութիւնը, այդ անհրաժեշտ պէտքը դժուածած և ապահովուած լինի արդէն, կամ ուրիշ բառերով ասենք, երբ այնչափ այժ կը տեսնենք մեր մէջ և մեր շուրջ որ մեր քարոզած մտքերը ընկերութեամբ գործադրելու դրութեան մէջ մտնենք, այդ ժամանակ եթէ ուրիշներ կազմած են արդէն հայ հայրենասիրական գործօն և կանոնաւոր մի ընկերակցութիւն, մենք ալ մեր խմբի այժը կը միացնենք անոնց հետ. իսկ եթէ այդպիսի դաշնակցութիւնը անկարելի դառնայ ինչ ինչ պատճառներով, մենք անդործ չենք մնար և մեր գաղափարակիցներուն խումբն կազմակերպելով կսկսինք գործել ինչ որ կրնանք։ Բայց մեկ սկսած գլխաւոր գործը գեռ չհատուցած, ուրիշ մեկ գլխաւոր գործի համար չենք ուզեր ցրուել մեր արդէն փոքրիկ այժեր և այդ ընթացքով ամենքն ալ անյաջողութեան ենթարկել։ Ամէնիան գեռ չազատված և ուրիշ մի գլխաւոր գործի աշխատելու համար ազատ ժամեր գեռ չունեցած, չենք ուզեր մի այնպիսի խմբի կամ ընկերութեան կազմակերպութիւնը ձեռնարկել և զան կառավարելու հրապարակային մի ծանր պատասխանատուութիւն առանձնել, առանց աջակիցներ ունենալու ըստ բաւականին։

Ոմանք ալ չատ մեզմ կը գանեն Ամէնիայի ընթացքը, ինչպէս ուրիշներ ալ ատոնիկ։ Բնական է այդքանի որ ամեն մարդ միեւնոյն կերպով չզգար և չը խորհի և չէ կարելի ամենուն միանդամայն հաճելի լինել. բայց միեւնոյն ժամանակ մի ապացոյց է այդ թէ մենք երկու ծայրայեղութիւններէն հեռու կեցած ենք և միջին ուղղութեամբ կը քայլենք. մեր փափաքն է ժողովրդին մէջ հայրենասիրութեան եռանդը յուզել, արթնցնել, բայց ոչ այրել և սպառել բոլորովին և ոչ ալ մեռցնող սառնութեան մէջ պահել զայն։ եթէ ծայրայեղութիւններն չեն ուղեր մեզ մօտենալ, մենք միջին կէտին վրայ գտնուելով կրնանք ըստ մասին հաղորդակից երկուքին հետ ալ և այսպէս միութեան գիծ (trait d'union) դառնալ մի օր անոնց մէջ։

Մենք կը փափաքինք որ հասկըցնայ ամեն Հայ թէ մի գործի մէջ յառաջդիմութիւնը վազելով կատարելով չլինելը, բայց միեւնոյն ժամանակ կանգնած տեղը երերալով ալ չլինելը, այլ յառաջ քայլելով։ Մենք կը փափաքինք որ հասկնայ ամեն Հայ թէ իւր հայրենակիցների իրը մարդ և իրը Հայ ապրելու իրաւունքը պահանջելն, բռնութեան սասկալի ճընշումներէն իւր հայրենակիցների ապաստութիւը պահանջելն՝ ոչ անհամեմատութիւն է և ոչ ալ անխոհեմութիւն։ Պէրլինի դաշնագրի 61րդ յօդուածը ստորագրուելէն ի վեր 11 տարիներ անցած են. և միթէ՝ տակաւին անհամերաշխութիւն կը լինի ոնոր գործադրութիւնը պահանջելն։ Այսչափ տարիներէ ի վեր Խաղիի Շէրիֆներուն, Խաղիի Հիւմայուններուն և դաշնադիրներուն հրատարակութիւններն կապացուցանեն թէ անհնար է առանց յեղափոխական միջոցներու դիմելու բարելաւել մեր քաղաքական դրութիւնը Թիւրքիոյ մէջ. միթէ անխոհեմութիւն կը լինի աշխատիլ յեղափոխական միտքեր տարածելու։

Մենք չատ ուրախ ենք անչուշտ և հետզհետէ աւելի կը քաջալերուինք, տեսնելով որ մեր համամիտները օր ըստ օրէ կը չատնան։ Բայց եթէ կան այնպիսիներ որոնք յանցանք կուզեն համարել Ամէնիային որ մենք ոչ մտնկական անհամերաշխութիւն կուզենք ունենալ, ոչ ալ ծերունիներուն կծծիութիւնը մեր ապագային այժեր գործածելու մասին, թ՛ոպ Հայ պատմութեան տպագոյն սայ մեր այդ յանցանքի պատասխանը։ Մ. Փ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Ամէնիայի Խմբագիր–Տնօրէնը դեռ հազիւ մի քանի օր յառաջ վերադարձած լինելով ճանապարհորդութենէն, իւր բացակայութեան ժամանակ ստացուած բազմաթիւ նամակներուն պատասխանելու համար ներողամտութիւն կը խնդրէ։ Կարեւորագոյն նամակներուն պատասխան կը դրկուի հետզհետէ։

— Եթէ կան այնպիսի նոր բաժնորդներ որոց անուն սրձանագրելու մոռցուած և սխալմամբ չէ դրկուած իրենց թերթի, կը խնդրենք որ հաճին շուտով իմացունել մեզ։ Իսկ եթէ ընդհակառակ կան այնպիսիներ որոնք չեն ուզեր չարունակել Ամէնիայի բաժնորդագրութիւնը և սխալմամբ իրենց դրկուած է այս Դ տարեշրջանի թուերէն, կը խնդրենք որ առաջին թիւն ստացածնուն պէս՝ փոստով վերադարձնեն մեզ զայն, վրան refusé գրելով։

— Ամէնիայի տարեշրջանը կը հաշուուի Օգոստոսէն և բաժնորդագրութիւնները քան այնմ կարձանագրուին. հետեւապէս վեցամեայ Բ շրջանը կը սկսի Փետրվարէն։ Բաժնորդագրութիւնն կընդունուին մի միայն այս տարեշրջանի ընթացքին համար, այսինքն մինչեւ 1889 յունիսի վերջ։

ՆԱԹԱՆԵԱՆ ԳՕԴՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մէջ գտնուող մեր բարեկիցներէ մին կը նամակագրէ մեզ հետեւեալը։

Վանեցի Նաթանեան Գօդոս վարդապետն որ մի քանի տարիներ յառաջ Հայաստանի գանազան կողմերն պտըտելով անոնց տեղագրութիւններն հրատարակած և «Արտօսր Հայաստանի» անուն մի տետրակի մէջ պատճառած հարստահարութիւններ երեւան հանած լինելուն համար Թիւրքիոյ կառավարութեան կողմէն փնտռտուած և վախած էր, մի քանի տեղեր թափառելէ յետոյ գնացած էր Պարսկաստան, ուր երեսէն գետին մօտ գըտնուող Ս. Ստեփաննոսի վանքին վանահայր եղած էր և բառական ժամանակէ ի վեր կը վարէր այդ պաշտօն։ Անցած յունիս ամսին մէջ հրաժարելով վանահայրութեան պաշտօնէն և բարեհաճութեամբ վեհ. Կաթողիկոսին, արձակուելով գնացեր է Դաւրեժ ուր մի քանի օր Առաքնորդարանը ծախէ յետոյ կը մեկնի Սալմաս

ՅԱՂՎԱԾՈՒՄ ԴՈՂԿՎԱԾՈՒՄ

Ա

ՅԱՂՎԱԺՎԱՍՆԱՅՍՆԵՈՂՈՒՆ

ԴԱՎԱԵՈՎՄՈՎ ՎՃՄՉՎՃՄՈՒ

Ա. Ե. Ղ.

Ա. Ե. Ղ. Ա. Ե. Ղ. Ա. Ե. Ղ.

ՅԱՐԴԱՆՔՆԵՐ
ՄԻ ՀԱՑՐԵՆԱՍԻՐ ԽՄԲԱԳՐԻ

Գ. Փորթուգալեան, Հայաստանի Բարեկիր, պատուասիրուած իւր հայրենակիցներէն.

Այս վերնագրի տակ կը կարդանք Նիւ-Եորքի Star լրագրի սեպտեմբեր 11 թուին մէջ հետեւեալը.

Հետաքրքիր օտարականներէն մի մեծ բազմութիւն հաւաքուած էր անցած չաբաթ երեկոյ, 7րդ փողոց և 3րդ ավենիւն, Իսթըրն Սթար Հօլլ (Արեւելեան Աստղ անուն սրահն) մէջ։ Անոնք բոլորն ալ Հայեր էին և եկած էին պատուել Պրն. Փորթուգալեանը որ Ֆրանսայի Մարսէյլ քաղաքը հրատարակուող Արմենիա անուն թերթի Խմբագիրն է։

Պ. Փորթուգալեան եկած է այժմ այցելել մեր երկիրը։ Այս քաղաքի մէջ գտնուող 1000ի չափ Հայերի գերազանց 1/3ը ներկայ կը գտնուէր նոյն երեկոյ սրահը և այդ առնդիրները շատ ոգեւորուած էին։

Պրն. Փորթուգալեան ակնյայտն է այն Հայերի որոնք կը տառապին Թիւրքերի բարբարոսութենէն. նա իր ազգի Բարեկէնն է։ Պ. Ս. Մինասեան, հայ միլիոնատէրը, կը նախագահէր այդ միտինկին։ Նոյն երեկոյեան հիւրը առենախօսուց Ժողովրդին իր ազգային լեզուով։

Առենախօսութենէն յետոյ մի նուիրատուութիւն եղաւ (1)։ Պ. Փորթուգալեան շատ մօտիկ օրերը կը վերադառնայ իւր խմբագրական պաշտօնը շարունակելու, իւր այս կարճ այցելութենէ գեղեցիկ յիշատակներ առնելով իւր հետ։ Ինք Վանցի (2) է, այն քաղաքէ որ Շատ միլոտ չնչած է Հայերի Ազգ. Թատրոնի յիշատակին համար։

Ոսթըր քաղաքի Worcester Evening Gazette լրագրի սեպտ. 12 թուին մէջ կը կարդանք հետեւեալը.

ՀԱՅԵՐՆ

Բարի գալուստ Մարսիլիացիակ հրատարակիչ Պրն. Փորթուգալեանին.

Երէկ գիշեր Մէյն փողոցը Թ. 418, Թէմփերանս Հօլլ սրահին մէջ հաւաքուած էին 150էն աւելի Հայեր, բարի գալուստ մուղթելու համար Պրն. Մ. Փորթուգալեանին որ Ֆրանսայի Մարսէյլ քաղաքը տպագրուող Արմենիա լրագրի Խմբագիր-Հրատարակիչն է։ Թէեւ նա ծանօթացած չէ բնաւ Ուսթըրի ժողովրդին մէջ, իր վրայ կը խօսուէր մեծ մեծ հայրենասէր, լեզուագէտ և լաւ հմուտ անձ է։ Ակռէ զատ, նա մի կատարեալ աշխուժ անձ լինելով, Հայերի և Հայաստանի դատին եռանդուռ դործիչներէ մէն եղած է իր պատանեկան հասակէն ի վեր։ Իւր հրատարակած լրագիրը շատ տարածուած է իւր հայրենակիցներուն մէջ որոյմէ շատեր այստեղ եւս կը ստանան և կը կարդան զայն և հաւանօրէն այդ կերպով հաստատուած է իւր և իւր ընթերցողներուն մէջ մի մտերմական համակրութիւն որ այնչափ ուժգին կերպով երեւան եկաւ երէկ գիշեր, Պրն. Փորթուգալեանին իր հայրենակիցներէ եղած ընդունելութեան միջոցին։ Մինինկին նախագահեց այս քաղաքի բնակիչներէն Պրն. Մ. Ց. Թօփհանէլեան որ քաղաքավարական պատշաճ մի քանի խօսքերէ յետոյ, ներկայացուց իւր բարեկամն և նոյն երեկոյեան հիւրն որ վերին աստիճանի համակրական ցոյցերով ընդունուեցաւ Ժողովրդէն։

Պրն. Փորթուգալեան երէք քառորդ ժամէն աւելի խօսեցաւ որմէ յետոյ Պրն. Ց. Սարրաֆեան ներկայացուեցաւ որ իւր ունկնդիրներուն շատ հաճելի կերպով խօսեցաւ։ Հայերի աշխարհական այս առաջին ժողովի գումարման յաջողութիւնը եղած է իրենց մէջէ մի քանի անձերի աշխատութեամբն որոնք այստեղ հաստատուելէ ի վեր իրենց ձեռքէ եկած ամեն չանքեր կանեն միութեան ոգի յառաջ բերելու համար իրենց մէջ այն դիտումով որ կարենան հաստատել իրենց մէջ ազգային, կամ թէ տանէք քաղաքական, նպատակով մի ակումբ (club) իրենց ազգային իրաւունքը յառաջ տանելու համար։ Այս նպատակով և տեսակէտով, 7 անձերէ մի մանաժողով կազմուեցաւ երէկ գիշեր որ դործին մի կազմակերպութիւն տալու համար օրէնքի նախագիծներն պիտի պատրաստէ։ Անտարակոյս այդ դործ չատ չահաւէտ պիտի լինի Հայերին, թէ իրը մի ժողովուրդ և թէ իրը մի հասարակութիւն։

ԱՍՈՐԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Վանէն մեզ կը հաղորդեն հետեւեալը.

«Վանի Հարեւան Նահանգական Ասորիներն որ Թուրքօ-պարսկական սահմանագլխի Թիարիի և Ծուհուրի լեռներն կը բնակին, ասկէ ամիս մը յառաջ եկան Վան քաղաք և Վալիին բողոք տուին թէ իրենց տուրքերը ծանր են և չեն կարող վճարել։ այժմ կիմանանք որ պէնք վերացեր են և իրենց դրացի Քիւրտերուն հետ կը բանուելով, 8 հոգի սպանեած են անոնցմէ։ Թիւրք կառավարութիւնը մէկ թապուր զօրք վուլթայ պրկել այստեղէն, Ասորիներուն չարժուածներն զսպելու համար։»

Փորթուգալեանին որ Ֆրանսայի Մարսէյլ քաղաքը տպագրուող Արմենիա լրագրի Խմբագիր-Հրատարակիչն է։ Թէեւ նա ծանօթացած չէ բնաւ Ուսթըրի ժողովրդին մէջ, իր վրայ կը խօսուէր մեծ մեծ հայրենասէր, լեզուագէտ և լաւ հմուտ անձ է։ Ակռէ զատ, նա մի կատարեալ աշխուժ անձ լինելով, Հայերի և Հայաստանի դատին եռանդուռ դործիչներէ մէն եղած է իր պատանեկան հասակէն ի վեր։ Իւր հրատարակած լրագիրը շատ տարածուած է իւր հայրենակիցներուն մէջ որոյմէ շատեր այստեղ եւս կը ստանան և կը կարդան զայն և հաւանօրէն այդ կերպով հաստատուած է իւր և իւր ընթերցողներուն մէջ մի մտերմական համակրութիւն որ այնչափ ուժգին կերպով երեւան եկաւ երէկ գիշեր, Պրն. Փորթուգալեանին իր հայրենակիցներէ եղած ընդունելութեան միջոցին։ Մինինկին նախագահեց այս քաղաքի բնակիչներէն Պրն. Մ. Ց. Թօփհանէլեան որ քաղաքավարական պատշաճ մի քանի խօսքերէ յետոյ, ներկայացուց իւր բարեկամն և նոյն երեկոյեան հիւրն որ վերին աստիճանի համակրական ցոյցերով ընդունուեցաւ Ժողովրդէն։

Պրն. Փորթուգալեան երէք քառորդ ժամէն աւելի խօսեցաւ որմէ յետոյ Պրն. Ց. Սարրաֆեան ներկայացուեցաւ որ իւր ունկնդիրներուն շատ հաճելի կերպով խօսեցաւ։ Հայերի աշխարհական այս առաջին ժողովի գումարման յաջողութիւնը եղած է իրենց մէջէ մի քանի անձերի աշխատութեամբն որոնք այստեղ հաստատուելէ ի վեր իրենց ձեռքէ եկած ամեն չանքեր կանեն միութեան ոգի յառաջ բերելու համար իրենց մէջ այն դիտումով որ կարենան հաստատել իրենց մէջ ազգային, կամ թէ տանէք քաղաքական, նպատակով մի ակումբ (club) իրենց ազգային իրաւունքը յառաջ տանելու համար։ Այս նպատակով և տեսակէտով, 7 անձերէ մի մանաժողով կազմուեցաւ երէկ գիշեր որ դործին մի կազմակերպութիւն տալու համար օրէնքի նախագիծներն պիտի պատրաստէ։ Անտարակոյս այդ դործ չատ չահաւէտ պիտի լինի Հայերին, թէ իրը մի ժողովուրդ և թէ իրը մի հասարակութիւն։

---

(1) Արմենիայի Խմբագիր-Տնօրէնը նոյն գիշեր սրահին մէջ յայտարարեց թէ մի քանի օր միայն ունի Ամերիկա մնալու համար և թէ այդ օրեր կուզէ յատկացունել, որչափ կարելի լինի, երթալ զանազան քաղաքներ գտնուած Հայերն տեսնելու. հետեւապէս այդ ճաշկերոյթի յատկացունելիք օր չունենալով, իւր ջերմ շնորհակալութիւնները հետ միասին յայտնեց թէ չէ կարող ընդունիլ իրեն եղած այդ պատուաբեր հրաւէրը։ Խմբ.

(2) Որովհետեւ Մ. Փորթուգալեան Վանէն աքսորուած է թիւրք կառավարութեան ձեռքով և 10 տարիներէ ի վեր այնտեղ բնակութիւն հաստատած կըզործէր, կարծած են ոմանք թէ Վանեցի է։ Խմբ.

ՀԱՌԱՋԱՆՔ ԱՐՄԷՆՈՒՀԻՈՅՆ

Ի ՀԱՑԱՍՏԱՆ (1)

Երբ կը լսեմ Հայաստանիս անունն, թնդայ սիրտս ուժգին.
Երբ կը յիշեմ իր տառապանքն, արտասուօք աչքս կը թրջին.
Մխիթ անոր նման թշուառ կայ հայրենիք մ՚ալ արդեօք,
Որուն ձայնին լըսող չկայ, կուլայ կողբայ դառն ցաւովք։
Ելէք, Վարդան, Տիգրան, Արամ, տեսէք ձեր մայրն միանդամ,
Թո՛ղ իր սպրդին արիւնցուներն ձեզ ձեր չիրմաց մէջ անդամ.
Տեսէք, ի՛նչպէս վտարանդի կը թափառի տուն Հայկայ
Ի ամեն կողմէ կը հալածուի, կը հարուածուի անխնայ։
Ա՛խ, Հայաստան, դու սիրուն մայր, մինչ ե՛րբ այսպէս քու որդիք
Քեզնէ հեռու պիտ՝ հառաչեն. իսկ դու՛ք, մինչ ե՛րբ թափառիք.
Մինչ ե՛րբ և ես մայրակարօտ Արմէնուհիս քու սուրբ գիրկ
Չի դամ պիտի որ արտասուօքս թռչիմ ձեռքերդ քու փափկիկ։
Թէ կրնայի թռչիլ երթալ գլխիկս դնել իմ մօր ծոց,
Ուրախութեան արտասուօք հոն հանդչեցունել սրտիս բոց,
Դէմ մէկ անգամ փայփայանքով դըգուիլ անկէ, տալ համբոյր,
Ա՛լ թող պիս զոհ ընէր այնտեղ թշնամւոյն սուր սայրատուր։
Եկէք, եղբարք և սիրուն քոյրք, ձեռք ձեռքի տանք ու դործենք.
Մեծ թշնամին տգիտութիւնն է, ուրիշ տեղ չը փնտռենք.
Այդ թշնամին ըզմեզ թշշուառ ըրաւ, բաժնեց մեր մօրմէն
Պէտք է որ պայն սիրով, ուսմամբ յաղթենք վանենք մեր մէջէն։
Ա՛խ, Հայ եղբարք, հայկազն քոյրեր, մինչ ե՛րբ այսպէս անտարբեր
Թողուք որ գան որոմ յանել սիրոյ, ուսման մեր արտեր.
Ա՛խ, ա՛յն ատեն պիտ՝ արիւնանք երբ ամեն բան թշնամին
Բանդէ, ցրուէ, տայ հովին որ յիշատակայ չմնայ մին։
Արմէնուհի, ա՛լ յուսահատ ճղքէ սիրտդ որ դուրս թռչի
Խեղդուած տրտունջ հառաչքիդ ձայն ամեն կողմեր թող հընչի,
Երթայ հասնի մինչ Հայաստան, լըսէ քու մայրդ և զրկիայ
Թերևս զքեզ վտիտարէ պի օտարէն յոյս չի կայ։
Ո՛չ, այս յաւուր վանենամ թէ ես պիտի մտնեմ գերեզման.
Աբգադանգ մ՚ալ տուող չկայ երբ կը պօռամ Հայաստա՛ն.
Ա՛խ, ամեն կոմս լըռութիւն է, կարծես մահն է թագաւորեր,
Մեռելոց ու աւերակաց մէջ ալ ես բու եմ դալձեր։
Ա՛խ, Հայաստա՛ն, սիրտս ու հոգիս քեզ նուիրեմ, ընդունէ.
Թէ կարելի, թո՛ղ ես մեռնիմ ու Հայաստանս ստաք ելնէ.
Անոր սիրոյն՝ բանտն ալ դրուիմ, պալատ է ան ինձ համար.
Ոտքերս ձեռքերս չըղթան գարնեն, երջանկութիւնե է ան ալ։
Թէ մինչեւ իսկ աքսորուիմ, պիս թափառական ընէ բազդ,
Հայաստանիս սիրոյն համար ամեն տեղ ինձ կըլլան դրախտ.
Ներպատակիս համբիմ միայն, թո՛ղ պիս հանեն կախաղան,
Կախաղանէն ալ խրդողուղ ձայնս պիտի կանչէ ՀԱՑԱՍ... ՏԱ՛Ն։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

---

(1) Արմենիայի Խմբագիր-Տնօրէնն Նիւ-Եորքի մէջ սեպտ. 14ի ուրբաթ գիշեր իւր հայ հայրենակիցներուն հրաժեշտի ողջոյն տալու համար երկրորդ անգամ ատենաբանելէն յետոյ, ուղեկից ցոյց տալ թէ ինք մինչ որչա՛փ մեծ կարեւորութիւն տուած է հայրենասիրական դործին մէջ հայ կնոջ մասնակցութեանն, կարդաց այս ոտանաւոր զոր 14 տարի յառաջ դրած է և որի մէջ իւր զգացումները ուզած է յայտնել մի հայ աղջկան խօսել տալով։ Այս ոտանաւոր թէեւ հրատարակուած է Մ. Փորթուգալեանի Կ. Պոլիս խմբագրած և կառավարութեան ձեռքով խափանուած Ասպա լրագրի 1874 դեկտ. ամսի առաջին թուին մէջ և այնուհետեւ ալ արտատպուած է Գամպիեանի և Տնտեսեանի հրատարակած «Երգարան»ներին մէջ, բայց այդ «Երգարան»ներ վաղուց արդէն Թիւրք կառավարութեան կողմէն դրաւուած և բոլորովին արգիլուած լինելով, ուելորդ չհամարեցինք Արմենիայի մէջ վերստին հրատարակել զայն, Նիւ-Եորքի մէջ նոյն դիշեր ունկնդիր դտնուող մեր հայրենակիցներէ չատերի խնդրանքին համեմատ։ Խմբ.

ՎԱՍԻ. ԹԱԳԻՈՐ ՓԱՇԱ

ՅԱԿՈԲԵԱՆ

Արմենիան առաժամապէս դադրած էր հրատարակութենէ երբ Եգիպտոսի բնակ նշանաւոր մեր ազգակիցներէ Վասիլ. Թագուոր փաշա Յակոբեան յանկարծամահ եղաւ։ Ամիս և կէս անցած է արդէն օգոստ. 7/19ի մահաւանէչ գիշերէն ի վեր, բայց ուելորդ չենք համարիր այսօր իսկ արձանագրել մեր հայրենակիցներուն մէջ Հայ ազգին իւր ամենէն պատուաբեր զաւակներէ մէկին կորուստը և մեր խորին ցաւակցութիւն յայտնել հրապարակով։

Վասիլ. Թագուոր փաշա բնիկ Զմիւռնացի էր և իր աշխատութեամբ ու ճարտարութեամբ ձեռք բերած էր Եգիպտոսի մէջ այն բարձր դիրք և ազդեցութիւն զոր կը գործածէր նաև ի նպաստ իւր Ազգի։ Վասիլ Թագուոր փաշան, մանաւանդ վերջին ժամանակներ, իւր բարձր դիրքով, հա-

մակրութեամբ և նիւթական նպաստներով բաւական մղում տուած է ազգային յառաջդիմական գործերին։ Իւր մահ ընդհանուր վիշտ պատճառած է եգիպտոսի մէջ որի ապացոյց էր իր յուղարկաւորութեան հանդէսը։

Վսեմ Ցակոբ փաշա կը թողու մի այրի կին և 13 տարեկան որդին, Լեւոն Պէյը, զոր կը ներկայացուներն ժառանգորդ իւր Վսեմ Հօր բարէմասնութիւններին։

Հանգուցեալն թողած է մի կտակ որ թէեւ հրատարակուած չէ դեռ, բայց կը յուսացուի թէ անոր մէջ ազգին ալ կտակուած գումարներ կան։

Կ. ՊՕԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Յայտնի է մեր ընթերցողներէն թէ Հայ պէյերի և էֆէնտիների կուսակցութիւնը՝ որոց հայրենիքը Բ. Դուռն է, ինչ դաւեր կը խաղայ պատրիարքական ընտրութիւնն մէջ, իւր ընտրելի Գեր. Բարթողիմէոսի ընտրութիւնն յաջողցնելու համար։ Գեր. Խորէն Արքեպիսկոպոս Նարպէյի անունը դուրս ձգեցին ֆալաքական ժողովի պատրաստած 5 ընտրելիներէն ցանկէն։ Այսու ամենայնիւ Երեսփոխանական ժողովին մէջ Գեր. Բարթողիմէոս եպիսկոպոս 39 քուէ և Գեր. Խորէն Արքեպիսկոպոս Նարպէյ 36 քուէ ստացան. բայց որովհետեւ ոչ մէկը քուէների բացարձակ առաւելութիւն ստացած էր, որոշուեցաւ սեպտ. 16/28ին երկրորդ անգամ Ընդհ. ժողով գումարել։ Գեր. Խորէն Նարպէյ տեսնելով իր դէմ եղած դաւեր, զգուշանքով հրաժարեցաւ ընտրելիութենէ. բայց մեր ստացած մէկ հեռագրէ կիմանանք որ սեպտ. 16/28ին Երեսփոխանական Ընդհանուր ժողովին օրը, ժողովրդը հաղարաւոր բազմութեամբ ահագին մեծ ցոյցեր արեր, Նարպէյ Սրբազանի ընտրութիւը պահանջեր և այդ յուզման պատճառով քուէարկութիւնն յետաձգուեր է։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Ռուսիոյ Զարին եղբայրներէն Սերգիոս և Բաւել Մեծ Դուքսերն սեպտ. 12ին հասած են կ. Պոլիս պատրաստ ընդունուած են։

— Հելլենական կառավարութիւնը մեծ փութաջանութիւն ունի պատրաստ վիճակի մէջ դնելու համար իւր նաւատորմիղ։

— Ծունատաճի գահաժառանգ Կոստանդին Իշխանը նշանուած է Ալժանիոյ Կայսրին քրոջ Սոֆի Իշխանուհուն հետ։

— Մոնտենեգրոյի մէջ Գուլկոմներէն ստանիկ զրգռուած են թիւրք կառավարութեան իրենց ստած պրկանքներին դէմ և կը պահանջեն Պէրլինի դաշնագրին իրենց վերաբերեալ յօդուածի գործադրութիւնը։

— Թիւրքիոյ Սուլթանին նեղբիներէն Նէսիմ ապան ընկղմելով ապրնած վիճակը ազատելուն համար իւր պաշտօնակից Ֆերուզ ապան, Պէշիկթաշի մէջ կախուեր է։ Պալատի պաշտօնեաներէն չատեր ալ այս դէպքի պատճառով ազատուած են Մէտինէ։ Սուլթանը չատ է վախցեր երբ իմացեր է այսպիսի ապստամբութեան դէպք լինելը իւր պալատի մէջ։

— Կ. Պոլսի իտալական դեսպանը յատուկ ծանուցագրով պահանջած է Բ. Դռնէն որ չուտով կարգադրուին մի քանի Իտալացի հպատակներէ ուն նեցած պահանջներուն հաշիւներն։

— Հելլենական դրօշակ կրող մի առագաստանաւ որ Քիոս կղզուն առջեւ ապտնդ կորսար, պրաւուեր է Քիոսի կառավարիչ Բէյմալ պէյի հրամանովը և նաւապետն ալ բանտարկուեր է։ Ծունատաճի կառավարութիւնը Բ. Դրան բողոքած է Բէյմալ պէյի այս ընթացքին դէմ և հատուցում պահանջած է։

— Թիւրքիոյ Թղթատարական վարչութիւնը նոր կարգադրութիւններ արած է որոց համեմատ այսուհետեւ մէկ նամակի գինը, թէ ծովի և թէ ցամաքի վրայ, 40 փարա պիտի լինի 15 կրամի համար։ Իւրաքանչիւր նամակ կամ ծրար ապահովագրելու համար 40 փարա աւելի պիտի վճարուի, որչափ որ ալ լինի ծանրութիւնն։

— Հռոմի մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին, Ալմանիոյ Վիլհելմ կայսրը եկած ժամանակ իրեն չատ չքեղ ընդունելութիւն տնելու համար։

— Ալմանիոյ հանգուցեալ Ֆրեդերիկ Գ կայսրի յիշատակագիրներն հրատարակուած լինելուն պատճառով, կառավարութիւնը հարցաքննութիւն բացած է իմանալու համար թէ ինչպէս ձեռք անցուած են այդ գրութիւններ որոնց մէջ Պիսմարք իշխանի մեծ համբաւը պակասցնող տեղեկութիւններ ալ կան։ Մինչեւ անդամ ուղուեր է խուզարկութեան ենթարկել նախորդ կայսրուհւոյն Վիքթորիայի բնակարանը, բայց դատարկան նախարար Պրն. Ֆրոյտենբերգ ապառնացեր է հրաժարական տալ եթէ այդպիսի ծայրայեղութեան դիմեն։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

==

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Եւրոպայի մէջ բնակած մի Հայի Հայաստանի վերայ տրած խորհրդածութիւններովը կը սկսի և մի Անգլիացու լեռնով կը պատմէ երեւանցի մի հայ աղջկան հատատամութիւնը մահմետական կրօնը չընդունելու և իր հայ նշանածի հետ ամուսնանալ համար), 30 սանթիմ.

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ (Հայ գիւղացիներէն բան վիճակը որ չատերին անծանօթ մնացած է, ուսումնասիրելու պէտքը կը ներկայացունէ), 20 սանթիմ.

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԵԼԻ (Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի մտորմունքներն և մտածումներն են Սաղմոսի ճոխ դրուած), 40 սնթիմ.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիոյ Լրմբագրատունէն, որոնց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը Լրմբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

Գ. Աբովեանց—ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. (Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, գիտնալ թէ ի՛նչպէս սկսեր է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ի՛նչպէս եկեր հասեր է մեր օրերը, ո՛րանք եղած են իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները են.։ Գէորգ Աբովեանց որ Տփղիսի Ներսիսեան վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր, գրած էր այս «Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան»ը որ մինչեւ այժմ երրորդ տպագրութեան արժանացած է։) 2 ֆր.

Գամառ. Քաթիպա — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազատաշունչ և հրահանդիչ բանաստեղծութիւններն կը պարունակէ. սկիզբն գրուած է հեղինակին պատկերը)։

2 ֆրանգ։

ՍԻՍՈՒԱՆ կամ Համառօտաւոր հայկական կլիմիոյ. Հ. Ղեւոնդ Ալիշանի այս հրաշակերտ՝ ոչ միայն ամենամեծ պատիւ կը բերէ բազմահմուտ հեղինակի հայրենասիրական զգացմանն, այլ և մեծ պարծանք է ամբողջ հայութեան համար որի փառաւոր յիշատակներն տեղատեղի մէջէն և գաւառ փոշիների տակէն դուրս բերել յաջողած է։ Կլիմիան, մեր վերջին թագաւորութեան օրրանն ու դերեզմանը, ներկայացուած է այս գրքի մէջ իւր ամեն մանրամասնութիւններով։ Ընթերցողը կը գտնէ այնտեղ պատմական, աշխարհագրական, տեղագրական, բնախօսական ևն. հին ու նոր տեղեկութիւններ, հայ թագաւորների հրովարտակներ, իշխանական, դատավարական ևն. հետաքրքրաշարժ ծանօթութիւններ։ Բանք Ալիշանի պէս բազմահմուտ մի անձի ուսումնասիրութեան և խուզարկութիւնների արդիւնքն եղած են։ Հայ գրականութեան մէջ երեւցած այդ հրաշակերտ՝ որ հայրենասէրը վարդապետին Հ. Ղեւոնդ Ալիշանի ճարտար և անխոնջ ձեռքովը կանգնած է ցոյց տալու համար մեր կիլիկեան թագաւորութեան փառքն ու պարծանքը, արժան է որ զարդարէ ամեն մէկ հայի գրադարանը դի ամեն հայ իրաւունք ունի պարծենալու անով։

Գրքին սկիզբը կայ վեր. հեղինակին պատկերը։ Ամբողջ գործը՝ բացի մի ընդարձակ ներածութենէ, կը պարունակէ 592 երկիջեան երեսներ։ Տպագրուած է ընաիր տեսակ թղթի վրայ և ունի 235 գեղեցկագիծ պատկերներ որոնք կը ներկայացունեն կիլիկիոյ գեղեցկագոյն տեսարանները։ Ունի նաեւ Կիլիկիոյ աշխարհագրական նրբագիծ մէկ քարտէզը որ առանձինն եւս կը ծախուի Արմենիոյ Լրմբագրատունը, ինչպէս նշանակուած է յետագրեալ ծանուցումներուն մէջ։

ՍԻՍՈՒԱՆի առաջնակարգ տեսակը (լաւագոյն թղթի վրայ տպագրուած և 15ի չափ գունաւոր պատկերներով և պարգեւագիրներով) 55 ֆրանգ։

Նոյնը Բ կարգի (առանց գունաւոր պատկերներուն) 40 ֆր.

Նոյնին ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆը (Այս վերջին տեսակ որ 1885 թ. «Բազմավէպ»ի իրը վերջին եռամսեայ պրակին հրատարակուած է, աչխարհարար լեզուով քարտէսներ կը ներկայացունէ ՍԻՍՈՒԱՆԷն որ գրուած է գրաբար լեզուով—թէեւ ոչ խրթին և անհասկնալի աճով — և ծանօթութիւններ կուտայ Սիսուանի պարունակութիւններուն վրայ այնպէս որ պարզ չունեցողին ցանկութիւնը կը գրգռէ ունենալու համար և ունեցողին ալ մի լաւ առաջնորդ կը լինի այդ ընդարձակ աշխատութեան մէջ դիտող աչքով չրջելու և հետազօտելու համար։ 3 ֆր. 50 սնթ.

Գամառ. Քաթիպա — ԱԶԱՏ ԵՐԳԵՐ. (Գամառ Քամիպոյի «Բանաստեղծութիւններ»էն Ազատ Երգերի մասը առանձին տետրակով տպագրուած), 20 սանթիմ։

ԲԱՖՖԻ—ԿԱՑԾԵՐ. Ա և Բ հատորներ. Ազգային վիպագիրը Պրն. Բաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը բռնեն ԿԱՑԾԵՐը։ Ա յս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի գաղտագող գործերի և հայերի գրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողներն։ Մի խօսքով, թէ՛ իրը ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իրը հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրքը ամեն հայրենասէր Հայի տուն։

Գինն Ա հատորին 7 ֆր., Բ հատորին 8 ֆր. և 50 սանթիմ։ Երկու հատորներն միասին գնողին 15 ֆր.։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.